ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱԹՍԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ և ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/9

ք.Երևան

«19» 10 2020թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի, որը գործում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էյչ Վի Էյ Սի Սերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Աղազարյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Կաթսաների վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության **առավելագույն գինը կազմում է 9 017 000 (ինը միլիոն տասյոթ հազար) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.
ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.
Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը

հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 20 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
Ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057
Էդգար Գեվորգյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Էյչ Վի Եյ Սերվիս>> ՍՊԸ
Հասցե՝ Արարատի մարզ գ. Սուրենավան
Արցախի 15 տուն,
<<ԷՎՈԿԱԲԱՆ>> ՓԲԸ
Հ/Հ 1660015949430100
ՀՎՀՀ 04230785
Նարեկ Աղազարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1
«19» 10 2020թ. կնքված
ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/9 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

անվանումը և գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության*							
	հ/հ	տեխնիկական բնութագիրը	չ/մ	միավոր ծառայության առավելագույն արժեքը (ՀՀ դրամ)	Ընդհանուր քանակ	Առավելագույն ընդհանուր գին գին (ՀՀ դրամ)	կատարման ժամկետը
կաթսաների վերանորոգման և պահպանման ծառայություններ CPV 50531110/3	**Կատարողը պետք է իրականացնի ստորև ներկայացված ցանկում ընդգրկված ջեռուցման համակարգերի վերանորոգում,պահեստամասերի փոխարինում ներառյալ պահեստամասերը**					**9017000**	Ծառայության մատուցումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 45 օրացուցային օրվա ընթացքում:
	Q. Երևան, Խորենացի 3, 7, 7ա (ընդհանուր մակերեսը՝ 8913,1 քառ. մետր)						
	1	BAXI TECHNISEASY-1 (հզորությունը՝ 291 Կվտ) ջեռուցման կաթսայի օդի ցուցիչի փոխարինում (Q.Երևան, Խորենացի 3)	դրամ	50000	1		
	2	Pedrollo HFM5BM պոմպի առանցկակալի փոխարինում		120000			
	3	Pedrollo HFM5BM պոմպի միջադիրի փոխարինում		3000			
	4	Կաթսայատնից դուրս եկող 2" չափսի մետաղական խողովակի փոխարինում		8000			
	5	Կաթսայատնից դուրս եկող խողովակների մշակում հակակոռոզիոն նյութով		3000			

	6	Կաթսայատնից դուրս եկող խողովակների ջերմամեկուսացում ջերմամեկուսիչով		1200			
	7	Կաթսայատան ծխնելույզի ապամոնտաժում և մոնտաժում(Չժանգոտվող թիթեղից խողովակ տրամագիծը՝ 250մմ)		7000			
	8	Calpeda NR 65/160B/A պոմպի միջադիրների փոխարինում (ք.Երևան, Խորենացի 3 հասցեում գտնվող կաթսայատուն)		2000			
	9	Calpeda NR 65/160B/A պոմպի առանցկակալների փոխարինում (ք.Երևան, Խորենացի 3 հասցեում գտնվող կաթսայատուն)		15000			
	10	Ջեռուցման մարտկոցի տեղադրում		5000			
	11	Ջեռուցման մարտկոցների փականների փոխարինում (անկյունային ամերիկյան մետաղական փական)		2500			
	12	Մեկ աշխատասենյակի ջեռուցման համակարգի ապամոնտաժում և նորի մոնտաժում 1" չափսի զոդման անկյունակ 1" չափսի անկյունակ 1" չափսի եռաբաշխիչ մեջտեղը 1/2" չափսի 1/2" չափսի փական 1" չափսի ամրակ/կլիպս/ 1" չափսի մետաղոպլաստե խողովակ 1/2" չափսի մետաղոպլաստե խողովակ 1/2" չափսի զոդման անկյունակ		80000			
	ք. Երևան, Կոմիտաս 35 (ընդհանուր մակերեսը՝ 4440,1 քառ. մետր)						
	1	Մեկուսիչ ԱՏԱ-200 կաթսայի փականի փոխարինում (1" չափսի փական)		4000			
	2	Ճնշման 4" չափսի փականների վերանորոգում /միջադիրների փոխարինում/ (4" չափսի փականի միջադիր)		10000			
	3	Ջրի մանոմետրի փոխարինում (1/2" չափսի մանոմետր)		15000			
	4	Ջերմաչափի փոխարինում (1/2" չափսի ջերմաչափ)		18000			

5	Պիզոմետրի փոխարինում (1/2" չափսի պիզոմետր)		12000				
6	Անկյունային ուղիղ մետաղական փականների փոխարինում (3/4" չափսի անկյունային ուղիղ մետաղական փականներ)		1800				
7	Անկյունային ուղիղ մետաղական փականների փոխարինում (1/2" չափսի անկյունային ուղիղ մետաղական փական)		2500				
8	Միջադիրների փոխարինում (1/2" չափսի միջադիր)		500				
9	Թուջե մարտկոցի գլխիկի փոխարինում		500				
10	Մետաղոպլաստե դետալների ընդհանուր ֆիքսում		200				
	ք. Երևան, Իսակովի 10 (ընդհանուր մակերեսը՝ 4817,4 քառ. մետր), ք. Երևան, Իսակովի 10 /3-րդ հարկ/ (ընդհանուր մակերեսը՝ 355,0 քառ. մետր)						
1	BAXI K-250 կաթսայի օդի ցուցիչի փոխարինում (ք. Երևան, Իսակովի 10)		25000				
2	Կաթսայատան եռաֆազ պոմպերի ապամոնտաժում, նորերի տեղադրում		550000				
3	BAXI K-250 կաթսայի վառարանի մաքրում		20000				
4	BAXI K-90 կաթսայի դիագնոստիկա (ք. Երևան, Իսակովի 10)		10000				
5	BAXI 32 Կվտ կաթսայի (ք. Երևան, Իսակովի 10, /3-րդ հարկ/) E1 ցուցիչի փոխարինում		80000				
6	Կաթսայի հետադարձ սեղմիչի /կլապան/ փոխարինում (3/4" չափսի)		3000				
7	Անկյունային մետաղական փականների փոխարինում (1/2" չափսի)		2500				
8	Ավտոմատ օդահանի տեղադրում (1/2" չափսի)		5000				
9	Խողովակի մամլում		200				
10	Խողովակների կցորդիչների փոխարինում, պատերի քանդում (1" չափսի)		1400				
11	Խողովակների կցորդիչների փոխարինում, պատերի քանդում (1/2" չափսի կցորդիչ)		1200				
12	Եռաբաշխիչ դետալի փոխարինում (1" չափսի եռաբաշխիչ մեջտեղը 1/2" չափսի)		800				
13	Ջեռուցման մարտկոցի սեկցիայի փոխարինում		6000				

	ք. Երևան, Դեղատան 3 (ընդհանուր մակերեսը՝ 2628,7 քառ. մետր)						
	1	Խողովակների ապամոնտաժում, նոր խողովակների մոնտաժում զոդման միջոցով (2" չափսի մետաղոպլաստե խողովակ)		3000			
	2	Ջեռուցման մարտկոցի փականի փոխարինում (3/4" չափսի փական)		2800			
	ք. Երևան, Ահարոնյան 12/3 (ընդհանուր մակերեսը՝ 1812,4 քառ. մետր)						
	1	Ferroli 32Կվտ մակնիշի կաթսայի օդամղիչի լվացում		5000			
	2	Ferroli մակնիշի կաթսայի օդամղիչի հովացուցիչի փոխարինում		10000			
	3	Ferroli մակնիշի կաթսայի օդամղիչի ճնշման մոնոմետրի փոխարինում		15000			
	4	Անկյունային մետաղական փականների փոխարինում (1/2" չափսի անկյունային մետաղական փական)		2500			
	5	Ջեռուցման մարտկոցների սեկցիաների փոխարինում		6000			
	ք. Երևան, Մանթաշյան 55 (ընդհանուր մակերեսը՝ 1242,7 քառ. մետր)						
	1	Valman Super Star32Կվտ մակնիշի կաթսայի օդամղիչի լվացում		5000			
	2	Valman Super Star32Կվտ մակնիշի կաթսայի օդամղիչի հովացուցիչի փոխարինում		10000			
	3	Valman Super Star32Կվտ մակնիշի կաթսայի օդամղիչի պլաստմասե անցման տեղադրում (3/4" -ից 1/2"չափսի պլաստմասե անցում)		1000			
	4	Անկյունային մետաղական փականների փոխարինում (1/2" չափսի անկյունային մետաղական փական)		2500			
	ք. Երևան, Շինարարների 3/1 (ընդհանուր մակերեսը՝ 1661,6 քառ. մետր)						
	1	ITALTHERM 24Կվտ մակնիշի կաթսայի օդամղիչի հովացուցիչի փոխարինում		10000			
	2	ITALTHERM 24Կվտ մակնիշի կաթսայի օդի փուչիկի		5000			

		վերանորոգում (3/4" -ից 1/2"չափսի (էգ>որց) պլաստմասե միջադիր)					
	3	Օդահանի տեղադրում (ավտոմատ օդահան)		2000			
		ք. Երևան, Մոլդովական 41/3 (ընդհանուր մակերեսը՝ 1562,3 քառ. մետր)					
	1	Ամերիկյան փականների փոխարինում զոդման միջոցով		2500			
	2	Փականների փոխարինում զոդման միջոցով		1800			
	3	Անկյունակների փոխարինում զոդման միջոցով		500			
	4	Անցման դետալների փոխարինում		400			
	5	Եռաբաշխիչի փոխարինում		500			
	6	Անցման դետալների փոխարինում		400			
	7	Մետաղոպլաստե խողովակների փոխարինում		1200			
	8	Մետաղոպլաստե խողովակների փոխարինում		1800			
	9	Անցման դետալի փոխարինում		400			
	10	Անցման դետալի փոխարինում		400			
	11	Եռաբաշխիչի փոխարինում		500			
	12	Եռաբաշխիչի փոխարինում		500			
	13	Փականի փոխարինում զոդման միջոցով		2500			
	14	ՈՒղիղ դետալի փոխարինում		1000			
	15	Փականի փոխարինում		2800			
	16	Փականներիի փոխարինում		2500			
	17	Եռաբաշխիչի փոխարինում		500			
	18	Անցման դետալների փոխարինում		400			
	19	Մետաղոպլաստե խողովակների փոխարինում		1800			
	20	Փականների փոխարինում զոդման միջոցով		2500			
	21	Անցման դետալների փոխարինում		400			
	22	Մետաղոպլաստե խողովակների փոխարինում		2800			
		ք. Երևան, Սասունցի Դավթի 87,87ա (ընդհանուր մակերեսը՝ 1250,3 քառ. մետր)					
	1	Ավտոմատ օդահանի տեղադրում		2000			
	2	Ջեռուցման մարտկոցի սեկցիայի փոխարինում		6000			
	3	Շենքի 2-րդ հարկի ջեռուցման մոնտաժի ձևափոխում		150000			
		ք. Երևան, Անդրանիկի 37/1 (ընդհանուր մակերեսը՝ 731,6 քառ. մետր)					
	1	Squirrel 32Կվտ մակնիշի կաթսայի օդամղիչի		10000			

		հովացուցիչի փոխարինում						
	2	Squirrel 32Կվտ մակնիշի կաթսայի պոմպի միջադիրների փոխարինում		1000				
	3	Ջեռուցման մարտկոցի սեկցիայի փոխարինում		6000				
	4	Պոմպի տեղադրում		50000				
	ք. Երևան, Հյուսիսային փող. 6 (ընդհանուր մակերեսը՝ 2070,7 քառ. մետր)							
	1	Ariston 32Կվտ մակնիշի կաթսայի օդամղիչի հովացուցիչի փոխարինում		10000				
	2	Ariston 32Կվտ մակնիշի կաթսայի օդի ցուցիչի փոխարինում		25000				
	3	Ariston 32Կվտ մակնիշի կաթսայի ջերմափոխանակիչի փոխարինում		18000				
	4	Կաթսայի գոլոշու արտածման խողովակի փոխարինում		3000				
	5	Կաթսայի կոնդեսատորի լվացում, համակարգի կարգավորում		5000				
	6	Ջեռուցման մարտկոցի սեկցիայի փոխարինում		6000				
	7	Ջեռուցման մարտկոցի տեղադրում		3000				
	Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Պռոշյան 29 (ընդհանուր մակերեսը՝ 1441,7 քառ. մետր)							
	1	Squirrel 32Կվտ մակնիշի կաթսայի պլաստմասե կարգավորման շրջանակի փոխարինում		3000				
	2	Ջեռուցման մարտկոցի փականի փոխարինում զոդման միջոցով		2500				
	Արարատի մարզ, ք. Արտաշատ, Օգոստոսի 23 փող. 83 (ընդհանուր մակերեսը՝ 969,1 քառ. մետր)							
	1	BAXI 32Կվտ մակնիշի կաթսայի օդամղիչի լվացում		5000				
	2	BAXI 32Կվտ մակնիշի կաթսայի օդամղիչի հովացուցիչի փոխարինում		10000				
	3	Պոմպի տեղադրում		50000				

	4	Անցման դետալների տեղադրում		400			
	5	Մետաղոպլաստե խողովակների փոխարինում		1800			
	6	Անկյունակների փոխարինում զոդման միջոցով		500			
	7	Եռաբաշխիչի փոխարինում		500			
	8	BAXI 32Կվտ մակնիշի կաթսայի ջուրը լցնող փականի փոխարինում		2800			
	9	Ջեռուցման մարտկոցի տեղադրում		6000			
	10	Ջեռուցման մարտկոցի փականի փոխարինում		2500			
	11	Ջեռուցման մարտկոցի միջադիրների փոխարինում		1000			
	Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության 1 (ընդհանուր մակերեսը՝ 952,3 քառ. մետր)						
	1	BAXI 32Կվտ մակնիշի կաթսայի օդամղիչի հովացուցիչի փոխարինում		10000			
	2	BAXI 32Կվտ մակնիշի կաթսայի օդի ցուցիչի փոխարինում		25000			
	3	Mercury 32Կվտ մակնիշի կաթսայի ջերմափոխանակիչի փոխարինում		18000			
	4	Մետաղոպլաստե խողովակի փոխարինում		1800			
	5	Մետաղոպլաստե եռաբաշխիչի փոխարինում		500			
	6	Մետաղոպլաստե հետադարձ փականի փոխարինում		2800			
	7	Ջեռուցման մարտկոցների միջադիրների փոխարինում		1000			
	ք. Հրազդան, Սպանդարյան 24/1, 24/2 (ընդհանուր մակերեսը՝ 1123,9 քառ. մետր)						
	1	BAXI 32Կվտ մակնիշի կաթսայի օդամղիչի լվացում		5000			
	2	Մետաղական փականի փոխարինում		2800			
	3	Ջեռուցման մարտկոցի սեկցիաների վերանորոգում		5000			
	4	Ջեռուցման մարտկոցի տեղադրում		3000			
	Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Հերոս քաղաք Նովոռոսիյսկի 4 (ընդհանուր մակերեսը՝ 488,0 քառ. մետր)						
	1	BAXI 32Կվտ մակնիշի կաթսայի ջուրը լցնող փականի փոխարինում		2500			
	2	BAXI 32Կվտ մակնիշի կաթսաների ծխատարների մեջտեղի հատվածի փոխարինում		12000			
	3	BAXI 32Կվտ մակնիշի կաթսայի ճնշման փականի փոխարինում		2800			

	4	BAXI 32Կվտ մակնիշի կաթսայի գազի խողովակի փոխարինում		3000			
	5	BAXI 32Կվտ մակնիշի կաթսայի օդամղիչի հովացուցիչի փոխարինում		10000			
	6	Ջեռուցման մարտկոցի մետաղական անկյունային փականների փոխարինում		1000			
	ք. Սևան, Սայաթ-Նովա 1/1 (ընդհանուր մակերեսը՝ 497,0 քառ. մետր)						
	1	Fondital 32Կվտ մակնիշի կաթսայի ճնշման խցիկի վերանորոգում		5000			
	2	Fondital 32Կվտ մակնիշի կաթսայի օդի ավելացում ճնշման փուչիկում		3000			
		Շիրակի մարզ, ք. Գյումրի, Հովսեփյան 1 (ընդհանուր մակերեսը՝ 1008,2 քառ. մետր)					
	1	Valman 32Կվտ մակնիշի կաթսայի օդամղիչի հովացուցիչի փոխարինում		10000			
	2	Valman 32Կվտ մակնիշի կաթսայի գազի խողովակի փոխարինում		3000			
	3	Կաթսայի տեղաշարժ՝ բարձրացում 20սմ դեպի վերև - Խողովակի տեղադրում - Անցումի տեղադրում - Անցումի տեղադրում - Անցումի տեղադրում		10000			
	4	Valman 32Կվտ մակնիշի կաթսայի օդամղիչի լվացում		5000			
	5	Valman 32Կվտ մակնիշի կաթսայի ջուրը լցնող փականի փոխարինում		2800			
	6	Միջադիրների փոխարինում		1000			
	7	Ջեռուցման մարտկոցի փականի փոխարինում		6000			
	ք. Գյումրի, Խորենացի 21 (ընդհանուր մակերեսը՝ 1235,4 քառ. մետր)						
	1	Ferroli 77,5 Կվտ մակնիշի կաթսայի օդի փուչիկի վերանորոգում		10000			
	2	Ferroli 77,5 Կվտ մակնիշի կաթսայի 3/8" չափսի մոնոմետրի վերանորոգում		8000			
	Բավրա մ/կ, Գյումրի-Նինացմինդա մայրուղի 4 (ընդհանուր մակերեսը՝ 5340,9 քառ. մետր)						
	1	Schuster 24 Կվտ մակնիշի կաթսայի պոմպի փոխարինում		25000			
	2	Ջեռուցման ընդհանուր համակարգում օդի տաքության		15000			

		ցուցիչի կարգավորում					
	3	400լ տարողության բոյլերների տաքացուցիչների փոխարինում		10000			
	Տավուշի մարզ, ք. Իջևան, Անկախության 12 (ընդհանուր մակերեսը՝ 1269,0 քառ. մետր)						
	1	Аристон 32Կվտ մակնիշի կաթսայի օդամղիչի հովացուցիչի փոխարինում		10000			
	Բագրատաշենի մ/կ, գ. Բագրատաշեն, 19 փող. թիվ 69 (ընդհանուր մակերեսը՝ 5698,6 քառ. մետր)						
	1	Shuster 32Կվտ մակնիշի կաթսայի պոմպի փոխարինում		30000			
	2	Ջեռուցման համակարգում ավտոմատ օդահանի տեղադրում		2000			
	3	Ջեռուցման համակարգի 35լ-անոց փուչիկի փոխարինում		15000			
	Այրումի մ/կ, գ. Այրում, Երկաթուղայինների 20 (ընդհանուր մակերեսը՝ 450,4 քառ. մետր)						
	1	Squirrel 18 Կվտ մակնիշի կաթսայի գազի պտույտափոխանցիչի /ռեդուկտոր/ փոխարինում		8000			
	2	Squirrel 28 Կվտ մակնիշի կաթսայի ուղղորդիչի զսպանակի փոխարինում		2000			
	3	Squirrel 28 Կվտ մակնիշի կաթսայի ներքին ջերմափոխանակիչի վերանորոգում		5000			
	4	Squirrel 28 Կվտ մակնիշի կաթսայի օդամղիչի հովացուցիչի փոխարինում		10000			
	5	Squirrel 28 Կվտ մակնիշի կաթսայի թվային էկրանի փոխարինում		12000			
	6	Ջեռուցման մարտկոցի անկյունային փականի փոխարինում		2500			
	Լոռու մարզ, ք. Վանաձոր, Վարդանանց 11 (ընդհանուր մակերեսը՝ 1420,2 քառ. մետր)						
	1	Ջեռուցման մարտկոցի անկյունային փականի փոխարինում		2800			
	2	Ջեռուցման մարտկոցի սեկցիաների փոխարինում		6000			
	3	Մետաղոպլաստե խողովակի փոխարինում		1800			
	4	Անցման դետալների տեղադրում		400			
	5	Անկյունակի տեղադրում		500			
	ք. Վանաձոր, Մոսկովյան 44 (ընդհանուր մակերեսը՝ 985,0 քառ. մետր)						

	1	BAXI 28 Կվտ մակնիշի կաթսայի ծխատարի փոխարինում		30000				
	2	BAXI 28 Կվտ մակնիշի կաթսայի գազի փականի փոխարինում		5000				
	3	Ջեռուցման մարտկոցի մետաղական ուղիղ փականի փոխարինում		2800				
	4	Ջեռուցման մարտկոցի ամրացում		1000				
	5	Գիպսակարտոնի վրա խողովակների ամրացում		300				
	Գոգավանի մ/կ, գ. Գոգավան (ընդհանուր մակերեսը՝ 5083,1 քառ. մետր)							
	1	Shuster 32Կվտ մակնիշի կաթսայի օդամղիչի լվացում		5000				
	2	Shuster 24Կվտ մակնիշի կաթսայի օդամղիչի լվացում		5000				
	3	Wilo top - SD32/7 պոմպի ապամոնտաժում, ֆիլտրերի լվացում և մոնտաժում		10000				
	4	Կաթսայի սառը ջրի խողովակների փոխարինում		1500				
	Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Նարեկացի 8/3 (ընդհանուր մակերեսը՝ 674,2 քառ. մետր)							
	1	Mira gren 35Կվտ կաթսայի շրջանառու պոմպի ապամոնտաժում, նորի տեղադրում		50000				
	Սյունիքի մարզ, ք. Կապան, Ռ. Մինասյան 20ա (ընդհանուր մակերեսը՝ 986.6 քառ. մետր)							
	1	Valman 36Կվտ մակնիշի կաթսայի օդամղիչի հովացուցիչի փոխարինում		10000				
	2	Valman 36Կվտ մակնիշի կաթսայի կայծի մատիտների փոխարինում		3000				
	3	Valman 36Կվտ մակնիշի կաթսայի օդամղիչի կողքի օդի հոսքի տվիչի փոխարինում		5000				
	4	Valman 36Կվտ մակնիշի կաթսաների ծխատարների փոխարինում		15000				
	5	Valman 36Կվտ մակնիշի կաթսայի շրջանառու պոմպի ապամոնտաժում, նորի տեղադրում		60000				
	ք. Գորիս, Տաթևացի 9 (ընդհանուր մակերեսը՝ 472,3 քառ. մետր)							
	1	Mercury 24Կվտ մակնիշի կաթսայի ներքին միջադիրների փոխարինում		1200				
	2	Mercury 24Կվտ մակնիշի կաթսայի փականների փոխարինում		2800				
	3	Mercury 24Կվտ մակնիշի կաթսայի փականների		2500				

			փոխարինում					
		4	Ջեռուցման մարտկոցի փականի փոխարինում		2500			
		5	Անցման դետալների փոխարինում		400			
		6	Անցման դետալների փոխարինում		400			
		7	Խողովակի տեղադրում		1800			
		8	Ջեռուցման մարտկոցի կախիչի ամրացում		1000			
		ք. Սիսիան, Սիսական 41գ (ընդհանուր մակերեսը՝ 266,8 քառ. մետր)						
		1	Beretta 35 Կվտ մակնիշի կաթսայի ջուրը լցնող փականի փոխարինում		3500			
		2	Beretta 35 Կվտ մակնիշի կաթսայի տակի ամերիկյան փականի փոխարինում		3800			
		3	Beretta 35 Կվտ մակնիշի կաթսայի 3 բար պայթուցիչի փոխարինում		12000			
		4	Ջեռուցման մարտկոցի փականի փոխարինում		2500			
		5	Ջեռուցման մարտկոցի սեկցիայի փոխարինում		6000			
		ք. Մեղրի, գ. Կարճևան, մայրուղի 4 (ընդհանուր մակերեսը՝ 2767,9 քառ. մետր)						
		1	Erensan 130 Կվտ մակնիշի կաթսայի ֆիլտրերի մաքրում, լվացում		5000			
		2	Erensan 130 Կվտ մակնիշի կաթսայի գազի այրման խողովակի փոխարինում		3000			
		3	Ջեռուցման մարտկոցի փականի փոխարինում		6000			
		4	Անցման դետալի փոխարիմում		400			
		5	Անցման դետալի փոխարիմում		400			
	Ընդամենը հանրագումարային գին				**2 142 000**			
	Կատարողի առաջարկած հանրագումարային գին				**1 980 000**			

*** Վերանորոգման ընթացքում օգտագործվող պահեստամասերը և նյութերը տրամադրում է ծառայություն մատուցող կազմակերպությունը, որոնց արժեքը պետք է ներառվի միավոր ծառայության մատուցման արժեքի մեջ: Ընդ որում վերանորոգման ենթակա սարքավորումների տեղափոխումն ու վերադարձը իրականացվում է ծառայություն մատուցող կազմակերպության կողմից:**

** Ծառայության մատուցման ավարտից հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը պետք է ներկայացնի ակտ կատարած աշխատանքների, վերանորոգված կամ փոխարինված դետալների վերաբերյալ:

*** Վճարումն իրականացվում է փաստացի մատուցված ծառայության դիմաց:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	Էյչ Վի Եյ Սերվիս>> ՍՊԸ
ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7	Հասցե՝ Արարատի մարզ գ. Սուրենավան
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Արցախի 15 տուն,
Հ/Հ 900011054013	<<ԷՎՈԿԱԲԱՆ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 02647057	Հ/Հ 1660015949430100
Էդգար Գեվորգյան	ՀՎՀՀ 04230785
	Նարեկ Աղազարյան
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 2
« 19 » 10 2020թ. կնքված
ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/9 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

				Ապրանքի												
				Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում												
...ավերով ...ատեսված ...փաբաժնի ...համարը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	4239	50531110/3	Կաթսաների վերանորոգման և պահպանման ծառայություն										9017000	9017000	9017000	**9017000**

...ման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057
Էդգար Գեվորգյան

/Ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Էյչ Վի Եյ Սերվիս>> ՍՊԸ
Հասցե՝ Արարատի մարզ գ. Սուրենավան
Արցախի 15 տուն,
<<ԷՎՈԿԱԲԱՆ>> ՓԲԸ
Հ/Հ 1660015949430100
ՀՎՀՀ 04230785
Նարեկ Աղազարյան

/Ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« 19 » 10 2020թ. կնքված
ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/9 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«19» 10 2020թ. կնքված
ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/9 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն